

ԹԱԻԼԱՆԴ ԵՎ ԿԱՄԲՈԶԱ Մայիսի 12-22, 2019 թ.



Բաղրամյան 1 | amenoor@spinnaker.am | +37491323264



amenoor
adventures and expeditions with spinnaker group

Այցելության հիմնական վայրերը

■ Փոուկետ

Փոուկետը Թաիլանդի ամենամեծ կղզին է: Աշխարհի լավագույն լողափերից միայն 35-ը գտնվում են հենց այստեղ: Բացի սպիտակափայլ ավազոտ լողափերից Փոուկետն իր այցելուներին առաջարկում է մշակութային հետաքրքրաշարժ տուրիզմ, էկզոտիկ խոհանոց, մատչելի խանութներ ու զնուններ:

■ Փհի-Փհի կղզիներ

Սրանք Անդաման ծովում պարադիզիակ կղզիների մի խումբ են, որոնցից մեկի՝ Կո Պի-Փի-Լեի Մայա Բեյ լողափում է նկարահանվել Լեոնարդո Դի Կապրիոյի «Լոդափը» հայտնի ֆիլմը: Կհաո Պինգ Կհան կղզում էլ նկարահանվել է «Ջեյմս Բոնդ»-ի մասին պատմող հայտնի ֆիլմը: Այս կղզիախումբն, իրավամբ, համարվում է դրախտ երկրի վրա:

■ Կամբոջա. Անգկոր Վաթ

Անգկոր Վաթը հինդուական տաճարային համալիր է Կամբոջայում: Այն աշխարհի ամենամեծ կրոնական հուշարձանն է: Տաճարը նվիրված էր Վիշնու աստծուն, սակայն աստիճանաբար փոխակերպվել է բուդդիստական տաճարի: Համալիրը ընգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկում:

■ Յոգայի դասընթացներ Հակոր Բադդասարյանի հետ



Բարի գալուստ Թաիլանդ կամ «ազատների երկիր»:

Թաիլանդը արկածային տուրիզմի և յոգայի սիրահարների համար իսկական դրախտ է: Այստեղ ճանապարհորդը կարող է գտնել այն, ինչ փնտրում է՝ լողափնյա հանգստից մինչև սուր զգացողություններ:

Թաիլանդում են գտնվում աշխարհի լավագույն լողափերը, Բուդդայի ամենամեծ ոսկեծույլ արձանն ու կոկորդիլոսների ֆերման: Թաիլանդի հարակից կղզիները՝ մասնավորապես Փհի-Փհի կղզիախումբը, համարվում է հոլիվուդյան ռեժիսորների ամենասիրելի նկարահանման վայրերից մեկը:

Թաիլանդը կարող է բավարարել նույնիսկ ամենաբծախնդիր զբոսաշրջիկի քմահաճույքները: Սիրո՞ւմ եք գնումներ, իսկ էկզոտիկ ուտեստնե՞ր, գուցե մերսո՞ւմ կամ դայվի՞նգ, ոչ մի խնդիր: Իսկ ահա յոգայի սիրահարներն ամբողջ ճանապարհորդության ընթացքում հնարավորություն կունենան բացահայտելու յոգայի առեղծվածային աշխարհը, որովհետև ձեզ ուղեկցելու է Հայաստանի Յոգայի Ֆեդերացիայի նախագահ Հակոբ Բաղդասարյանը: Վերջինս կօգնի ձեզ Թաիլանդի լողափերում միասին բացահայտել հոգու, մարմնի և մտքի ներդաշնակության գաղտնիքը:

Ձեր ճանապարհորդության ընթացքում դուք կայցելեք Փհուկետ – Պատտայա – Բանգկոկ - Կամբոջա: Այցի ընթացքում կլինեք տվյալ կետերի պատմամշակութային վայրերում, կզբոսնեք քաղաքով, կհամտեսեք տեղական խոհանոցը և իհարկե ժամանակ կունենաք անհոգ հանգստի համար ասիական լավագույն լողափերում: Շտապե՛ք հավաքել ճամարուկները, Թաիլանդը ձե՛զ է սպասում:



Հակոբ Բաղդասարյան
Խմբի ղեկավար



Թռիչքի տվյալներ՝

12.05 / Երևան – Դոհա 03:00 – 04:55 / Դոհա – Փիուկետ 20:00 - 06:55+1

22.05 / Բանգկոկ – Դոհա 14:10 - 18:00 / Դոհա – Երևան 20:50 – 00:50

ՕՐ 1

Թռիչք Երևանից, ժամանում Փիուկետ, տեղափոխում դեպի հյուրանոց

Ժամանելով Փիուկետ՝ մեզ կդիմավորի ուղեկցորդն ու կտեղափոխի հյուրանոց: Այդ օրը կունենանք բավարար ժամանակ հանգստանալու ծովափին ու պատրաստվելու հաջորդ օրվա զբոսանքին: Ի դեպ, ազատ ժամանակը կարող եք օգտագործել յոգայով զբաղվելու համար: Երկար ճանապարհից հետո, իսկապես չէր խանգարի լարված մկանները թուլացնել:

ՕՐ 2

Ազատ օր

Փիուկետում ժամանակը շատ արագ է թռչում, այնպես որ արագ կողմնորոշվեք, թե ինչով եք ուզում զբաղվել՝ զբոսանք քաղաքով, այցելություն խանութներ կամ գուցե յոգա լողափում: Հայաստանի Յոգայի Ֆեդերացիայի նախագահ Հակոբ Բաղդասարյանը սիրով կկիսվի ձեզ հետ առաջին յոգայի գաղտնիքներով:



ՕՐ 3

Ողևորություն դեպի Փիի-Փիի կղզիներ

Ահա և առաջին հետաքրքրաշարժ ողևորությունը դեպի Փիի-Փիի կղզիախումբ: Այսօր կուղևորվեք Փիի- Փիի Լեի կղզի, որտեղ կունենաք հնարավորություն լողալու չքնաղագույն Փի Լե լագունում: Այստեղ է նկարահանվել Լեոնարդո Դի Կապրիոյի «Լողափը» հայտնի ֆիլմը:

Նկարահանումների ժամանակ 20th Century Fox կինոընկերության ղեկավարության հրամանով կտրվել են մեծ թվով կոկոսի ծառեր և այլ բույսեր, որպեսզի կղզին ստանա ավելի դրախտային տեսք: Երկար դատական քաշքշուքներից հետո կինոընկերությունը ենթարկվել է մեծ տուգանքների և ստիպված եղել տրամադրել հսկայական միջոցներ կղզու նախնական տեսքը վերականգնելու համար:

Տեղի ֆաունան անչափ գեղեցիկ է: Խորհուրդ կտանք անպայման զբաղվել այստեղ սնորքի խնդրով:

Հաջորդիվ կտեսնենք նաև Վիկինգների քարանձավը և Կապիկների լողափը:

Փիի-Փիի Դոն ռեստորանում ճաշելուց հետո՝ կշարժվեք դեպի Կայ Նայ կղզի: Այստեղ կարող եք լողալ ու արևայրուք ընդունել ինչքան կամենաք: Մի լավ հանգստանալուց հետո կվերադառնաք հյուրանոց:





ՕՐ 4

Ազատ օր

Եվս մեկ ազատ օր Փիուկետում: Վայելեք այն, ի մի բերեք Փհի-Փհի կղզիներում ստացած տպավորություններն ու պատրաստվեք հաջորդ ուղևորությանը: Այդ օրն էլ կարող եք նվիրել օրինակ շնչառական մեդիտացիային, որն օգնում է թոթափել լարվածությունը:

ՕՐ 5

Մեկնում Բանգկոկ, այնտեղից Պատտայա

Հարմարավետ ավտոբուսով մեզ կտեղափոխեն օդանավակայան և կճանապարհեն Բանգկոկ, որտեղից էլ կուղևորվենք արկածներին ընդառաջ: Մեր հաջորդ կանգառն է Պատտայան:

ՕՐ 6

Շրջայց Պատտայայում

Պատրաստեք հարմարավետ կոշիկները, որովհետև մեզ սպասվում է ուշագրավ ծրագիր: Այսօր կայցելենք օձերի ֆերմա՝ «Dino Adventure»: Այստեղ կարելի է դիտել օձերի աննախադեպ շոու, ցանկության դեպքում կարող եք լուսանկարվել սողունների հետ:

Ոչ պակաս ուշագրավ ծրագիր է սպասվում «One Million Reptile» կոչվող կոկորդիլոսների ֆերմայում: Լատեքսի գործարանում կժանոթանանք արտադրական պրոցեսին և արտադրանքին: Այստեղ կունենաք ազատ ժամանակ զբոսնելու և գնումներ անելու:

Կանանց հատկապես դուր կգա այցելությունը «Vitamax» կոսմետիկ պարագաների բրենդային խանութ: Այստեղ ևս, ցանկության դեպքում, կարող եք գնումներ անել:

Շրջայցի ավարտին կգնաք Թեյերի տնակ և կհամտեսենք Թաիլանդական անուշաբույր թեյերի հարյուրավոր տեսակներից որևէ մեկը: Այս օրվա ծրագիրը կավարտենք թեյախմությամբ ու կվերադառնաք հյուրանոց:

ՕՐ 7

Ուղևորություն դեպի Կամբոջա

Այսօր լուսաբացը դիմավորելու ենք Պատտայա - Կամբոջա ճանապարհին, քանի որ ուղևորվելու ենք Սիեմ Ռիեմ քաղաք: Ճաշից հետո կայցելենք Արքայական դղյակի տարածք, որը շրջապատված է շքեղ այգիներով:

Եթե քանու արագությունը թույլ տա, օդապարիկով թռչնի թռիչքի բարձրությունից կհիանանք քաղաքի գեղեցկությամբ: Սուրճի սիրահարները անկասկած կգնահատեն այստեղի գաղութային սրճակին տնակ: Այստեղ սուրճ կվայելենք և կկիսվենք տպավորություններով:

Այնուհետ կտեղավորվենք հյուրանոցում և դուք ունեք մի ամբողջ ազատ երեկո՝ բացահայտելու տեղի խոհանոցը:

ՕՐ 8

Անգկոր Վաթ

Վաղ նախաճաշից հետո կգբոսնենք Կամբոջայի պատմամշակութային վայրերում, որոնց շարքում են՝ աշխարհի ամենամեծ կրոնական հուշարձանը՝ հայտնի հինդուական տաճարային համալիր Անգկոր Վաթը, Բայոնը, Թա Պրոմը, Թա Կեոն, Փղերի հարթավայրը: Ի դեպ, Անգկոր Վաթում Հակոբ Բաղդասարյանի հետ միասին կարող եք զբաղվել մեդիտացիայով, ապա շարունակել ճանապարհը: Այստեղ գալիս են հիմնականում մեդիտացիա անելու համար:

Ճաշից հետո կունենանք այցելություն մետաքսի արտադրամաս, ապա կվերադառնանք Պատտայա՝ լի անկարագրելի տպավորություններով:



Օր 9

Բանգկոկ

Այսօր մեզ սպասվում է ևս մեկ անմոռանալի օր, այս անգամ Բանգկոկում: Շրջայցի ժամանակ կայցելենք հայտնի բուդդիստական Վաթ Սակետ տաճար, որը տեղացիները կոչում են Ոսկյա սարի տաճար: Տաճար բարձրանալիս, երբ կանցնեք զանգերի կողքով, խորհուրդ ենք տալիս հնչեցնել դրանք: Ասում են, եթե հնչեցնես այդ զանգերը, ապա հաջողությունը և առողջությունը միշտ կուղեկցեն քեզ: Հավատա՞լ այս լեգենդին, թե՞ ոչ, կարող եք որոշել ինքներդ՝ փորձելուց հետո: Այստեղ է նաև ամփոփված Բուդդայի աճյունից մի մասնիկ, որով էլ հայտնի է տաճարը: Այնուհետ կգրոսնենք տաճարի շրջակայքով ու կհիանանք ճարտարապետական լուծումներով:

Հաջորդիվ մեզ սպասվում է ևս մեկ հետաքրքիր վայր՝ ոսկերչական գործարան, որտեղ կարելի է գնել Թաիլանդի լավագույն ոսկերիչների ձեռքի աշխատանքները՝ պատրաստված շափյուղայից, ռուբինից և զմրուխտից: Երեկոյան էլ կարող ենք ամբողջ խմբով այցելել քաղաքի լավագույն ռեստորաններից կամ ակումբներից մեկը և նշել մեր հաջողված ճամփորդությունը:

Օր 10

Տեղափոխում Բանգկոկի օդանավակայան – մեկնում Երևան

Ճանապարհորդության ավարտը նախատեսված է Բանգկոկի օդանավակայանից, այնպես որ հրաժեշտ տվեք Թաիլանդին և բարի վերադարձ Երևան:



ՓԱԹԵԹԻ ԱՐԺԵՔԸ ՄԵԿ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՈՒՄ Է 875.000 ₺

Փաթեթի արժեքը ներառում է

- ✓ Երկկողմանի ավիատոմս Երևանից
- ✓ Անհատական երկկողմանի փոխադրում օդանավակայան - հյուրանոց
- ✓ 10 գիշեր երկսեղանի հյուրանոցային սենյակներում նախաճաշով
- ✓ Պատտայա – Կամբոջա – Բանգկոկ տեղափոխում
- ✓ Նավարկություն դեպի Փիի – Փիի կղզի
- ✓ 3 ճաշկերույթ
- ✓ Յոգայի դասընթացներ Հակոբ Բաղդասարյանի կողմից
- ✓ Ռուսալեզու ուղեկցորդի ծառայություններ
- ✓ Մուտքի տոմսեր
- ✓ Վիզա
- ✓ Ապահովագրություն



Հետաքրքիր փաստեր

Թափլանդի մասին

- Այժմ Թափլանդում 2561թ է:
- «Թափլանդ» թայերենով հնչում է որպես «Պրաթենն Թխայ», որը թարգմանաբար նշանակում է «ազատների երկիր»:
- Պատտայան համարվում է Թափլանդի սեքս-քաղաքը:
- Թափլանդում է գտնվում Բուդդայի ամենամեծ ոսկեծույլ արձանը, ամենամեծ կոկորդիլոսների ֆերման:
- Սիամական կատուները սերում են Թափլանդից, որը նախկինում Սիամ էր կոչվում:
- Թափլանդը համարվում է աշխարհին բրինձ մատակարարող ամենամեծ երկիրը: Մոտ 6000 տարի առաջ առաջին անգամ հենց Թափլանդում են առաջին անգամ աճեցրել բրինձը:
- Ըստ Գինեսսի ռեկորդների գրքի՝ թայական այբուբենն իր մեծությամբ երկրորդն է աշխարհում:
- Թափլանդցիները գրեթե երբեք ալկոհոլ չեն օգտագործում: Նրանց հազվադեպ կտեսնեք հարբած:
- Թայերենում «սով» բառ չկա:
- Նորին մեծություն Թափլանդի թագավորը միակ միապետն է աշխարհում, որը ունի ԱՄՆ-ի քաղաքացիություն: Վերջինս նաև ամենաերկար ղեկավարող միապետն է:





Բաց մի թողեք այս ամենը սեփական աչքերով տեսնելու բացառիկ
հնարավորությունը:
Հեքիաթային Թաիլանդը սպասում է ձեզ:

Բաղրամյան 1 | amenoor@spinnaker.am | +37491323264



amenoor
adventures and expeditions with spinnaker group